Պատմություն և մշակույթ 2024 № 21 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2024.21.2.388

Border Aygehovit and its Monuments

Meri Safaryan
https://orcid.org/0009-0003-5989-2402
Scientific Research Center of Historical and Cultural Heritage
SNCO of the Ministry of ESCS RA, Yerevan
mersaf87@mail.ru

Keywords: Tavush, Aygehovit, border, monuments, rural settlements, Srvegh monastery.

The border community of Aygehovit is located in the Tavush region of the Republic of Armenia and is rich in medieval monuments. Five dozen monuments of republican and local significance are included in the state lists of monuments. Among the numerous settlements, standing and dilapidated churches, chapels and cemeteries with beautiful carved khachkars (cross stones), the Srvegh monastery complex stands out, which is the second brick complex in the region after the Kirants monastery.

As part of the fixation and restoration program, in 2021-2022 research work and partial excavations were carried out here. In the developed Middle Ages, the monastery complex was a popular place of pilgrimage and played an important role in the spiritual and cultural life of the region along with its contemporaries, Kirants and Makaravank.

Today, Armenian border settlements, including monuments, are under the threat of Azerbaijan vandalism. In such conditions, in addition to various studies, we consider the most important factor to be the publication of these studies, the creation and strengthening of the monument-society connection. It is of great importance to cultivate a sense of ownership in the minds of the younger generation, which will contribute to the formation of the "psychology of the owner" and the growth of responsibility for the historical and cultural heritage.

Սահմանամերձ Այգեհովիտի հուշարձանները

ԿԳՄՍ նախարարության «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»

Հիմնաբառեր՝ Տավուշ, Այգեհովիտ, սահման, հուշարձաններ,

History and Culture Vol.-21(2), 2024, pp. 388-397.

Received: 21.09.2024
Revised: 06.10.2024
Accepted: 20.11.2024

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2024

գյուղատեղի, Սրվեղի վանք։

ՀՀ Տավուշի մարզում գտնվող Այգեհովիտ սահմանամերձ համայնքը հարուստ է միջնադարյան հուշարձաններով։ Այստեղ հաշվառված և հուշարձանների պետական ցուցակներում ընդգրկված են հանրապետական և տեղական նշանակության շուրջ հինգ տասնյակ հուշարձան ու ենթահուշարձան։ Բազմաթիվ գյուղատեղիների, կանգուն ու կիսավեր եկեղեցիների, մատուռների, գեղաքանդակ խաչքարերով գերեզմանոցների մեջ առանձնանում է Սրվեղի վանական համալիրը, որը Կիրանց վանքից հետո շրջանում երկրորդ աղյուսաշեն համալիրն է։ Վերականգնման ծրագրի շրջանակներում, 2021-2022 թթ. այստեղ հետազոտական աշխատանքներ ու մասնակի պեղումներ ենք իրականացրել։ Զարգացած միջնադարում վանական համալիրը նշանավոր ուխտատեղի է եղել և համաժամանակյա Կիրանց վանքի ու Մակարավանքի հետ մեծ դեր է ունեցել տարածաշրջանի հոգևոր-մշակութային կյանքում։

Հայաստանի սահմանամերձ բնակավայրերը, դրանց թվում նաև հուշարձաններն այսօր հայտնվել են ադրբեջանական վանդալիզմի վտանգի տակ։ Նման հանգամանքներում տարաբնույթ ուսումնասիրություններից զատ կարևորում ենք այդ աշխատանքների հանրահռչակումը, հուշարձան-համայնք կապի ստեղծումն ու ամրապնդումը։ Մեծ նշանակություն ունի սեփականության զգացողության սերմանումը մատաղ սերնդի գիտակցության մեջ, ինչը կնպաստի «տիրոջ հոգեբանության» ձևավորմանն ու պատմամշակութային ժառանգության հանդեպ պատասխանատվության աճին։

Приграничный айгеовит и его памятники

Мери Сафарян
ГНКО «Научно-исследовательский центр историко-культурного наследия»
при Министерстве ОНКС РА, Ереван

Ключевые слова*:* Тавуш, Айгеовит, граница, памятники, сельские поселения, монастырь Срвег.

Приграничная община Айгеовит, расположена в Тавушской области РА и богата средневековыми памятниками. Здесь, в государственные списки памятников включены, около пяти десятков памятников республиканского и местного значения. Среди многочисленных поселений, стоящих и полуразрушенных церквей, часовен и кладбищ с прекрасными резными хачкарами, выделяется монастырский комплекс Срвег, который является вторым кирпичным комплексом в регионе после монастыря Киранц. В рамках программы фиксации и реставрации, в 2021-2022 гг. здесь были проведены исследовательские работы и частичные раскопки. В развитом средневековье монастырский комплекс был популярным местом для паломничества и играл важную роль в духовной и культурной жизни региона наряду со своими современниками – монастырями Киранц и Макараванк.

Сегодня армянские приграничные поселения, в том числе и памятники, находятся под угрозой азербайджанского вандализма. В таких условиях, помимо различных исследований, считаем важнейшим фактором публикацию этих исследований, создание и укрепление связи памятник-общество. Большое значение имеет воспитание чувства собственности в сознании молодого поколения, что будет способствовать формированию "психологии собственника" и росту ответственности за историко-культурное наследие.

* * *

Ներածություն: ՀՀ Տավուշի մարզկենտրոն Իջևան քաղաքից 30 կմ արևելք, անտառապատ լեռնալանջերին է տեղավորված Այգեհովիտ գյուղը (Նկ. 1)։ Նախկինում կոչվել է Ուզունթալա, որն 1967 թ. անվանափոխվել է Հոնուտ։ 1969 թ. կոչվում է Այգեհովիտ [Հակոբյան և այլք, 1986, 227]։ Մտնում է պատմական Մեծ Հայքի Ուտիք աշխարհի Տավուշ գավառի տարածքի մեջ[1] [Հակոբյան, 1984, 237]։ Հյուսիսից սահմանակից է ներկայիս Ադրբեջանի Հանրապետության Գանձակ-Ղազախի վարչական շրջանին, որն հանդիսանում է պատմական Մեծ Հայքի Գուգարք նահանգի Զորոփոր կամ Կայեն գավառը [Հակոբյան, 1984, 239]։

Սահմանամերձ այս համայնքը հարուստ է միջնադարյան հուշարձաններով։ Այստեղ հաշվառված և պետական ցուցակներում ընդգրկված են հանրապետական ու տեղական նշանակության շուրջ հինգ տասնյակ հուշարձան և ենթահուշարձան (45 անուն)։ Հուշարձանների մեծ մասը վերաբերում են զարգացած և ուշ միջնադարին, մի քանիսը՝ նոր շրջանին։ Կան այնպիսիները, որ հաշվառվել են, սակայն չեն ընդգրկվել պետական ցուցակում։

Գյուղատեղիները («Խաշթառակ», «Վարդխմհատ», «Դիեր», «Մեծ Դիեր», «Քոլի գեղ», «Մահմուդ յալ», «Սրվեղ») և դրանցում առկա ենթահուշարձանները ավերված կամ կիսավեր վիճակում են։

Քիչ թե շատ պահպանվել են «Կոտրած եղցի» ու «Վարդխմհատի խաչ» միանավ բազիլիկ եկեղեցիները (ավելի շուտ՝ մատուռներ)։

«Կոտրած եղցի» կամ «Մահմուդեղցի» [պետական ցուցիչ՝ 10.9.6.2] եկեղեցին գտնվում է գյուղից 3 կմ հարավ-արևելք՝ անտառի մեջ, «Մահմուդի թալա» կոչվող բացատում տարածվող «Մահմուդեղցի» գյուղատեղիում։ Մինչև 1977 թ. ունեցել է թաղակապ ծածկ, որը գոտկել են հյուսիսային և հարավային պատերից բարձրացող սրբատաշ որմնամույթերը [ԴՀՎ 6, 1977, 146]։ Այժմ պահպանվել են խորանի մի մասը և հիմնապատերը՝ 0,6 մ բարձրությամբ։ Շարված է ճեղքված ավազաքարով ու կրաշաղախով։ Ներքուստ ծեփված է ավազակրի շաղախով (երկ.՝ 4,2 մ, լայն.՝ 6,0 մ)։ Հարավային կողմում տարածվում է գերեզմանոցը, որտեղ կան պարզ հորինվածքով խաչքարեր ու հարթ սալատապաններ։ Եկեղեցին թվագրվում է XII-XIII դդ.։ Հիմնովին վերակառուցվել է XVI-XVII դդ. [Կենտրոնի[2] արխիվ]։

Համեմատած ավելի լավ է պահպանվել «Վարդխմհատի խաչ» կոչվող եկեղեցին [պետական ցուցիչ՝ 10.9.10.1]։ Այն գյուղից 1,5-2 կմ հարավ գտնվող բլրի գագաթին է՝ «Վարդխմհատ»

[1] Գյուղի պատմական ճշգրիտ տեղադրության հարցում խորհրդատվության համար մեր շնորհակալությունն ենք հայտնում պրն Ալեքսան Հակոբյանին։
[2] «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն»։

գյուղատեղիում։ Վարդխմհատ է կոչվում (խմհատ – խամ հատել, անտառում մշակելի հողակտոր պատրաստել) բացատի անունով, որտեղ տարածվում է գյուղատեղին [ԴՀՎ 6, 1977, 146]։

Տեղացիները «Վարդխմհատի խաչ» եկեղեցին անվանում են նաև «Կոտրած եղցի»։ Միանավ բազիլիկ մատուռ է՝ կիսակլոր խորանով (երկ.՝ 5 մ, լայն.՝ 4 մ)։ Պատերը պահպանվել են 1-2,5 մ, իսկ խորանի հատվածում ու արևմտյան մասում՝ 3 մ բարձրությամբ (Նկ. 2)։ Խորանի հարավային ու հյուսիսային պատերին կան 2 ուղղանկյուն խորշեր։ Միակ մուտքը հարավից է։ Ծածկը եղել է թաղակապ։ Ըստ ճարտարապետական առանձնահատկությունների՝ թվագրվում է XII-XIII դդ. [Կենտրոնի արխիվ]։ Խորանի բեմի վրա իբրև վիմաքար դրված է եղել քանդակազարդ մեծ խաչքար [Եղիազարյան, 1947, 23]։ Ուսումնասիրողներն այն թվագրում են XII-XIII դդ. և համարել են այլ տեղից բերված [ԴՀՎ 6, 1977, 146]։ Այժմ խաչքարն իր տեղում չէ, գտնվելու վայրն էլ՝ անհայտ։

Բացի գյուղատեղիներից և դրանց կազմում ընդգրկված ենթահուշարձաններից (գերեզմանոց, մատուռ կամ եկեղեցի, խաչքար, տապանաքար և այլն), առանձին գերեզմանոցներից ու եկեղեցիներից՝ առկա են 18-րդ դարով թվագրվող դիտակետ-աշտարակ, Աղստև գետի վրա կանգնեցված կամուրջ (XVI-XVII դդ.), որն այժմ ավերված է և երկրորդ աշխարհամարտի զոհերի հիշատակը հավերժացնող հուշարձան։

Գյուղի հյուսիս-արևմտյան արվարձանների մոտ՝ վարելահողերի տարածքում գազատարի խողովակաշար անցկացնելիս բացահայտվել է մ.թ.ա. I-ին հազ. I-ին կեսով թվագրվող դամբարանադաշտ [III լրացուցիչ պետական ցուցակ]։ 2007 թ. ապրիլին տեղանքը հետազոտել են Ս. Հմայակյանն ու Ս. Դովլաթբեկյանը։ Ուսումնասիրվել է 1 ավերված դամբարան՝ տեղահանված կրաքարե սալաքարերով։ Հայտնաբերվել են խեցատներ, որոնք կրում են փայլեցումով արված զարդատարրեր [Կենտրոնի արխիվ]։

Հանրապետական նշանակության այս հուշարձանը վտանգված է, քանի որ գտնվում է վարելահողերի տարածքում և մոտ է ճանապարհին։ Թեև այն ընդգրկված է III լրացուցիչ պետական ցուցակում, սակայն սահմանները հստակեցված չեն, համակողմանի ուսումնասիրություններ, անգամ՝ հետախուզական պեղումներ չեն կատարվել։

Կանգուն, բայց վթարային վիճակում է գտնվում դիտակետ-աշտարակը, որը գտնվում է գյուղից 3 կմ հյուսիս՝ խաղողի այգիների մեջ [պետական ցուցիչ՝ 10.9.1]։ Արտաքուստ գլանաձև է։ Ներքուստ քառահարկ է, որի առաջին 3 հարկերը քառակուսի են, իսկ վերջինը՝ գլանաձև։ Հարկերն հաղորդակցվել են պատերին կից կառուցված քարե սանդուղքներով [Եղիազարյան, 1947, 23]։ Միջհարկային տարածությունը եղել է գերանածածկ (գերանների ամրացման հետքերը դեռ պահպանվել են պատերի վրա)։ Լուսավորվել է արևմտյան պատից բացվող, դեպի ներս լայնացող պատուհաններով։ Պատերին կան կամարակապ խորշեր և տարբեր լայնությամբ անցքեր՝ մշտադիտարկման և հրազենի համար։ Որոշ խորշերից՝ պատերի միջով, օդանցք հիշեցնող խողովակաձև հատուկ անցքեր են ձգվում տանիքից վեր [Եղիազարյան, 1947, 23]։ Պատերի հաստությունը 150-160 սմ է, պահպանված բարձրությունը՝ շուրջ 6,5-7 մ։ Հետազոտողներից Ի. Էլլարյանը մուտքը հիշատակում է արևմուտքից [Էլլարյան, 1980, 71, ԴՎՀ 6, 1977, 146], իսկ Ա. Մադոյանը, 1986 թ. կազմելով հուշարձանի վկայագիրը, մուտքը տեղակայում է հյուսիսային կողմում [Կենտրոնի արխիվ]։ Ներկայումս հիշյալ 2 կողմերի առաջին հարկի շարվածքում փլուզումներ և լայն ճաքեր կան (Նկ. 3)։ Կառուցված է մանր գետաքարերով և թրծած աղյուսով՝

թույլ կրաշաղախի լիցքով։ Պատմական տեղեկություններ հայտնի չեն։ Պատկանում է ուշմիջնադարյան դիտակետ-պահակատների տիպին։

Վերջին տարիներին վերականգնվել և այժմ գործում է գյուղի կենտրոնում գտնվող և XVII դ. թվագրվող Սբ. Հռիփսիմե եռանավ բազիլիկ եկեղեցին [պետական ցուցիչ՝ 10.9.12; Նկ. 4]։ Արևելյան կիսաշրջան խորանի հյուսիսային և հարավային կողմում ուղղանկյուն հատակագծով ավանդատներն են։ Թաղը նստած է 2 զույգ սյուների և որմնամույթերի վրա։ Աղոթասրահն այդ սյուներով բաժանված է 3 նավի։ Շքամուտքը հյուսիսից է։ Մուտքի վերևում քանդակված է Քրիստոսը՝ խաչը ձեռքին։ Պատկերի 2 կողմում թողնված է արձանագրություն. Յ[ԻՍՈՒ]Ս Ք[ՐԻՍՏՈ]Ս։ Լուսավորությունն իրականացվում է պատերին արված և դեպի ներս լայնացող լուսամուտների միջոցով։ Տանիքը երկթեք է։ Կառուցված է տեղական դեղնասպիտակավուն ճեղքած բազալտով։ Կրող կամարներն ու անկյունաքարերը մեծածավալ սրբատաշ բազալտից են։ Ունի 16x10 մ չափեր [Կենտրոնի արխիվ)։ Վերանորոգվել է 2017-18 թթ, որի ընթացքում թափված ծածկասալերի փոխարեն մակերեսը պատել են ցեմենտի սվաղով, ավելացրել զանգաշտարակ։

Բեմի վրա, խորանի պատին է հենած գեղաքանդակ ամբողջական խաչքար։ Մակերեսը քայքայված է՝ մրապատ ու մոմապատ։ Եկեղեցու վերաբերյալ տեղեկությունների մեջ որևէ կերպ այս խաչքարը չի հիշատակվում։ Չի բացառվում, որ այն բերված լինի այլ հուշարձանից։

Մեր կողմից փաստագրվել են զարգացած միջնադարին բնորոշ մի քանի խաչքար ևս, որոնց մասին որևէ հիշատակում չենք գտել և որոնք հաշվառված չեն։ Միգուցե դրանք նույնպես իրենց սկզբնական տեղերում չեն գտնվում։

Սրվեղի վանքի պեղումները։ Հիշատակված հուշարձաններից իր նշանակությամբ թերևս ամենաարժեքավորը Սրվեղի վանական համալիրն է։

Գյուղից 3 կմ հարավ-արևմուտք տարածվում է «Խաչին տակ» կոչվող հանդամասը, որտեղ տեղակայված է միջնադարյան գյուղատեղին։ Վանական համալիրը գտնվում է գյուղատեղիի տարածքում (Նկ. 1)։ Բաղկացած է Սբ. Նշան գլխավոր եկեղեցուց, վանքի միաբանության համար նախատեսված բնակելի և օժանդակ տնտեսական շինություններից, տապանաքարերով գերեզմանոցից, 1889 թ. կառուցված Սբ. Աստվածածին մատուռից։ Շրջապատված է եղել բարձր պարիսպով, որից հիմնապատերն են մնացել։ Պարսպից դուրս գյուղատեղիի և ձիթհանի ավերակներ են [Սաֆարյան, 2023, 235]։

Հուշարձանախմբի ամրակայման, նորոգման և վերականգնման պետական ծրագրի շրջանակներում մեր կենտրոնի («Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն») արշավախումբը 2021-2022 թթ. մաքրման, բարեկարգման աշխատանքներ և մասնակի հետազոտական պեղումներ իրականացրեց վանքի տարածքում (արշ. ղեկավար՝ Մերի Սաֆարյան)։

Վերականգնող ճարտարապետների խումբը՝ Հովհաննես Սանամյանի գլխավորությամբ, համագործակցելով ինժեներների, երկրաբանների և այլ մասնագետների հետ, կազմեց համալիրի պահպանված կառույցների ամրակայման, վերականգնման ու տարածքի բարեկարգման նախագիծը (Նկ. 5)։

Վանքի գլխավոր՝ Սբ. Նշան եկեղեցին գմբեթավոր դահլիճ տիպի կառույց է (երկ.՝ 15,5 մ, լայն.՝ 9,3-10,26 մ)։ Կառուցված է թրծած աղյուսով (չափերը՝ 25x25x4 սմ), միայն պատերի ստորին

շարքերը, մոտ 1 մ բարձրությամբ շարված են մուգ վարդագույն անդեզիտի սրբատաշ քարերով։ Հիմքերը դրված են բնական ժայռի վրա։ Հետագայում իրականացված մասնակի նորոգումները կատարվել են միջին չափի ճեղքած ժայռաբեկորներով։

Տարբեր տարիների իրականացրած վերանորոգումների հետքերն ակնհայտ երևում են եկեղեցու պատերի տարբեր հատվածներում։ Մասնակի նորոգվել է նաև գմբեթը [Սաֆարյան, 2023, 236]։ Կիրանց վանքից հետո շրջանում սա երկրորդ աղյուսաշեն համալիրն է [Էլլարյան 1980, 70]։ Վանական համալիրի հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ՝ պատմական տեղեկություններ չկան, իսկ հուշարձանի վիմագրությունը աղքատ է։ Ըստ ճարտարապետական ու կառուցողական առանձնահատկությունների և Կիրանցի հետ ունեցած բազմաթիվ զուգահեռների՝ թվագրվում է XIII-XIV դդ. [Կենտրոնի արխիվ]։

Պեղումների արդյունքում եկեղեցու ներսում գտնվեց տեղական մուգ վարդագույն ավազաքարից կերտված ամբողջական խաչքար (չափերը՝ երկ.՝ 183 սմ, լայն.՝ 63-71 սմ, հաստ.՝ 17-22 սմ)։ Հարդարված է նրբորեն արված 5 խաչապատկերներով [Սաֆարյան, 2023, 236)։ Քիվն ու ստորին մասը անզարդ են։ Ունի կանգնեցնելու համար նախատեսված պոչուկ։ Այն իր համադրելիներն ունի Շխմուրադի, Նոր Վարագավանքի խաչքարերի մեջ և ոճական առանձնահատկություններով թվագրվում է XII դ. սկզբներով [Սաֆարյան, 2023, 236]։

Հարավային ավանդատան առաջին հարկի ճակատային կամարաձև քարի (60×90 սմ) վրա պահպանվել են կրաշաղախ սվաղի վրա արված որմնանկարի հետքեր։ Եկեղեցու ներսում ևս տեղ-տեղ նկատվում են կրաշաղախի հետքեր։ Չի բացառվում, որ որմնանկարն ընդգրկած լինի ավելի մեծ ծավալներ։

Գլխավոր եկեղեցուց մի փոքր հյուսիս Սբ. Աստվածածին մատուռն է (երկ. ՝ 10,1-10,2 մ, լայն.՝ 5,6 մ)։ Ուղղանկյուն հատակագծով, կիսաշրջան խորանով կիսավեր շինություն է, որի հյուսիսային պատին մկրտարանն է։ Ծածկը թաղակապ է եղել, հատակը՝ հողից։ Շինությունը կանգուն է 2-2,5 մ բարձրությամբ։ Այն 1889 թ. կառուցել է գյուղի համայնքը՝ Տեր Հովհաննես քահանայի գլխավորությամբ [Կենտրոնի արխիվ)։

Եկեղեցիների պատերի մեջ ագուցված են վաղ թվագրվող խաչքարեր ու ճարտարապետական մանրամասներ։ Առավել հավանական է, որ դրանք ավելի վաղ գոյություն ունեցած կառույցի բեկորներն են, որոնք վերաօգտագործվել են [Սաֆարյան, 2023, 242]։

Սբ. Նշան եկեղեցու և Սբ. Աստվածածին մատուռի միջև տարածվում է միջնադարյան գերեզմանոցը։ Սալատապանները տեղական բազալտից են և ունեն ակոսագիծ եզրագոտի կամ ակոսագիծ քառանկյան մեջ ներառված երկխորան հարդարանք [Սաֆարյան, 2023, 243]։

Գտածոները։ Վանական համալիրի պեղումները արդյունավետ էին։ Գտածոների հիմնական մասը կենցաղային և շինարարական խեցեղենի բեկորներն են, որոնք հայտնաբերվել են մատուռի շրջակայքից։ Կարասների, կճուճների, սափորների, կժերի և այլ կավամանների բեկորները բնորոշ են այլ հուշարձանների ուշ միջնադարին և 19-20-րդ դդ.։ Առանձնանում է գոտեզարդ կարասի իրանի բեկորը։ Եզակի են լուսավորության կավակերտ միջոցները։ Դրանք մոմակալների ու բազմաչք ճրագակալների մանրամասներ են։ Վերջիններս սկավառակաձև հիմքի վրա գլանաձև ծորակատիպ ելուստներով տարբեր ճրագակալների հատվածներ են, որոնց ծորակատիպ ելուստները առանձին են պատրաստվել և հետո ամրացվել [Սաֆարյան, 2023, 246, Աղ. 1]։

Մետաղե գտածոների մեջ առանձնանում են արծաթե դրամներն ու բրոնզե խաչի բեկորը։

Հիշյալ դրամների թողարկումը կապվում է Աբաս I Մեծի անվան հետ։ Դրանցից երկուսը հատվել են Թավրիզի դրամահատարանում՝ 1717 և 1718 թթ., երրորդը՝ 1719 թ., Թիֆլիսում։

Պղնձի և անագի համաձուլվածքից (անագային բրոնզ) պատրաստված պարզ և նուրբ խաչից պապհանվել է միայն խաչաթեերից մեկը, որն ավարտվում է կիսալուսնաձև կտրվածքով՝ բուսականացված եռաբողբոջ վերջավորություններով [Սաֆարյան, 2023, 247-248, Աղ. 2]։ Ձևով նման է 11-13-րդ դդ. լայն տարածում ունեցած խորանի կամ սեղանի խաչերին [Հակոբյան, 1981, 33, Նկ. 2]։

Եզրակացություններ:. Ինչպես Սրվեղի վանքը, այնպես էլ՝ սահմանամերձ գյուղի բոլոր հուշարձանները վտանգված են։ Դրանք արդեն իսկ հայտնվել են ադրբեջանական վայրագությունների թիրախում՝ հատկապես նկատի ունենալով վերջերս ակտիվացած տարածքային նոր նկրտումները։

Ուստի կարևոր ենք համարում հատկապես սահմանամերձ հուշարձանների ոչ միայն ցուցակագրումը, նեղ մասնագիտական հետազոտությունները, այլև պեղումների լուսաբանումը, ուսումնասիրությունների հրատարակումն ու հանրահռչակումը։ Այդ նպատակով «Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնը» որդեգրել է անչափ կարևոր ռազմավարություն։ Մեր բոլոր արշավախմբերի աշխատանքային պլանի առանձնահատուկ բաղադրիչ է հանդիսանում հուշարձան-համայնք կապի ստեղծումն ու ամրապնդումը։ Այդ շրջանակներում տարբեր ծրագրեր ենք իրականացնում հատկապես դպրոցների հետ։ Մասնավորապես, պեղվող հուշարձանին մոտ համայնքի դպրոցում կարդացվում են բանախոսություններ՝ հուշարձանների, դրանց արժեքի, դերի ու նշանակության, կատարվող աշխատանքների վերաբերյալ։ Աշակերտներն ու համայնականները այցելում են պեղավայր և դառնում պեղումների անմիջական մասնակիցը։ Այդ կերպ փորձում ենք սեփականության զգացում սերմանել մատաղ սերնդի գիտակցության մեջ, ինչն էլ կբերի սեփական հուշարձանների, պատմության ու երկրի հանդեպ սիրո ու հոգածության աճին։

Այս ամենով հանդերձ, պատմաշակութային ժառանգությունը պահպանելու կարևորագույն նախապայմանը հող-հայրենիքը պահելն է։

Գրականության ցանկ

ԴՀՎ VI, Դիվան հայ վիմագրության, պր. VI, աշխ.Ս.Ավագյանի,Հ.Ջամփոլադյանի, Երեւան, ՀՍՍՀԳԱհրատարկչություն, 1977, 223 էջ։

Եղիազարյան Հ. 1947, Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները V, Իջևանի շրջան (ուղեցույց), Երևան, Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետին կից ճարտարապետության գործերի վարչ. հրատ.։

Էլլարյան Ի. 1980, Աղստևի հովտի պատմության և կուլտուրայի հուշարձանները, Երևան, «Հայաստան» հրատ.։

Հակոբյան Թ., Մելիք-Բախշյան Ստ., Բարսեղյան Հ. 1996, Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան, հ. 1, Երևան, Երևանի համալսարանի հրատ.։

Հակոբյան Թ. 1984, Հայաստանի պատմական աշխարհագրություն, Երևան, Երևանի համալսարանի հրատ.:

Հակոբյան Ն. 1981, Միջնադարյան Հայաստանի գեղարվեստական մետաղը IX-XIII դդ.: Ժամկոչյան Ա., Միջնադարյան Հայաստանի հաղճապակին IX-XIV դդ., խմբ. կոլ.՝ Առաքելյան Բ., Հայաստանի հնագիտական հուշարձանները, հ. 10, Երևան, ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., էջ 7-80:

Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնի արխիվ:

Մաֆարյան Մ. 2023, Սրվեղի վանական համալիրը (2021-2022 թթ. Պեղումների արդյունքները), Բանբեր Մատենադարանի, հ. 35, Երևան, Մատենադարանի հրատ.:

Լուսանկարներ՝



Սրվեղի վանքը, թիկունքում
Այգեհովիտ գյուղը

Նկ. 1 Սրվեղի վանքը, թիկունքում՝ Այգեհովիտ գյուղը

Վարդիսմիատի խաչ կամ
Կոտրած եղցի 12-13-րդ դդ.
(պետ. ցուցիչ 10.9.10.1)

Նկ. 2 Վարդիսմիատի խաչ կամ Կոտրած եղցի

Դիտակետ-աշտարակը
(պետ. ցուցիչ 10.9.1)

Նկ. 3 Դիտակետ-աշտարակը

Նկ. 4 Սբ. Հռիփսիմե եկեղեցին



Սբ. Նշան եկեղեցու հվ ճակատը (ճարտարապետ՝ Ա. Սարգսյան)

Նկ. 5 Չափագրություն՝ համալիրի վերականգնման նախագծից (ճարտարապետ՝ Ա. Սարգսյան)